

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը իր ամրագրումն է գտել ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեական օրենսգրքերում, և այն ուղղակի ինքնանպատակ չպետք է լինի: ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությունը՝ մինչդատական վարույթում մրցակցության սկզբունքի կիրառման սահմանների և շրջանակի առնչությամբ դրսևորում է մինչդատական վարույթում մրցակցության սկզբունքի որոշակի սահմանափակման և կիրառման հայեցակարգային մոտեցում: Գործի արդարացի քննության համար քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար:

Նախնական քննություն իրականացնող մարմիններին ուղղված՝ քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման օրենսդրական պահանջը չի կարող արդյունավետ իրականացվել, նախնական քննության խնդիրները չեն կարող արդյունավետ լուծում ստանալ նախաքննական տվյալների գաղտնիության բացառման պայմաններում:

Սակայն, քրեադատավարական օրենսդրությունը նախաքննության գաղտնիության ընդհանուր կանոնի հետ մեկտեղ, միաժամանակ գործի վարույթն իրականացնող մարմնին հայեցողություն է վերապահում թույլատրել նախնական քննության տվյալների հրապարակում, և իրավանորմերի անորոշության պատճառով գործնականում կարող է բազմաթիվ խնդիրներ առաջանալ: Համաձայն այդ դրույթի՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալ դիրքորոշումը.

«Սկզբունքային մոտեցումը պետք է լինի այն, որ նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող իրավասու մարմնի հայեցողությունը չպետք է լինի բացարձակ: Այդ

կապակցությամբ կայացված որոշումը պետք է հետապնդի նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակ»:

Այս առնչությամբ հատկանշական է, որ եվրոպական մի շարք երկրների (Էստոնիա, Սերբիա և այլն) քրեական դատավարության օրենսգրքերը հստակ սահմանում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում չի թույլատրվում քրեական գործի նյութի հրապարակումը: Մասնավորապես, դրանք առնչվում են հասարակական կարգի պաշտպանությանը, հանցագործության բացահայտմանը խոչընդոտելուն, քրեական դատավարությանը վնասելուն և հանցանքի կատարմանը նպաստելուն, առևտրային գաղտնիքին և իրավաբանական անձի գործունեությանը վնաս պատճառելուն, ընտանեկան կամ անձնական կյանքի անձեռնմխելիությունը խախտելուն կամ անձի պատիվն ոտնահարելուն, անչափահասի շահերին վնաս պատճառելուն և այլն¹:

Առարկայական ուսումնասիրելով նախաքննական տվյալների գաղտնիությունը երաշխավորող իրավանորմերը քրեաիրավական և քրեադատավարական այլ նորմեր համատեքստում, նախ պետք է հասկանալ և տարանջատել արդյոք նախաքննության ընթացքում ձեռք բերված բոլոր տվյալներն են համարվում նախաքննական գաղտնիք, և վերջապես ովքեր են այն սուբյեկտները, որոնք ենթակա են պատասխանատվության նախաքննական տվյալների հրապարակման համար, և ինչ է դիտարկվում «Նախաքննության տվյալ» հասկացության տակ. արդյոք դրանք նախաքննության ընթացքում ձեռք բերված բոլոր տվյալներն են (օրինակ՝ անձի տարիք, սեռ և այլ), թե՛ միայն այն տվյալները, որոնք վարույթն իրականացնող մարմինը մինչև նախաքննության ավարտը չի հրապարակում պաշտպանական կողմին:

Նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ քրեորեն պատժելի է: ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի դիսպոզիցիայում բացակայում է հատուկ սուբյեկտը, այսինքն՝ այն անձանց շրջանակը, որոնք պաշտոնեական կամ այլ դիրքի, կարգավիճակի կամ այլ

¹ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, Սահմանադրական դատարանի որոշում

հանգամանքների բերումով օրենքի ուժով հնարավորություն ունեն տիրապետելու այդ տվյալներին, և որոնց կողմից այդ տվյալների հրապարակումը պետք է դիտվի որպես քրեորեն պատժելի արարք: Արդյունքում, փաստորեն, ստացվում է, որ բոլոր անձինք (այդ թվում՝ լրագրողները), անկախ նրանից, թե ինչ հանգամանքներում են ձեռք բերել նշված տվյալները, արդյոք գիտակցում են, որ դրանք հետաքննության կամ նախաքննության տվյալ են, թե՛ ոչ, դրանց հրապարակման դեպքում անխուսափելիորեն ենթակա են քրեական պատասխանատվության:

Վերլուծելով վերոգրյալը՝ պարզ է դառնում, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը վերոնշյալ սկզբունքի վերաբերյալ առավել հայեցողական կիրառություն ունի և նշված հարցի վերաբերյալ, նման իրավական անորոշության պայմաններում, ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածը օբյեկտիվորեն հնարավոր չէ կիրառել: Սույն հարցի վերաբերյալ իրավական որոշակիության հարցը լուծելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 188-րդ հոդվածում, ամրագրվել է այն, որ վարույթի մասնավոր մասնակիցները, վկան և նրա փաստաբանն իրավունք ունեն հրապարակել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում իրենց հայտնի դարձած նախաքննության տվյալները, եթե քննիչը նույն հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկով գրավոր չի արգելել դրանց հրապարակումը: Այսինքն՝ նախագծով նախաքննության տվյալներ չհրապարակելը պայմանավորվում է վարույթն իրականացնող մարմնի ակտիվ գործողությամբ (գրավոր արգելքով), այն էլ որոշակի հիմքերի առկայության դեպքում: Այսինքն, այդ արգելքը պիտի լինի հիմնավոր²:

ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհրդի անդամ
փաստաբան Աղավնի Մադոյան

²ՀՀ փաստաբանների պալատի ակումբ 30.05.2014 թ.